Արձանագրություն N 3.1
«ՏԿՆ-ՀՄԱ-ԱՊՁԲ-2018/31» ծածկագրով հրատապ մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» դեկտեմբերի 2018թ.
ժամը 18:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյան

1. Արձանագրված անհամապատասխանության մասին
(Կ. Գասպարյան)

Գնահատող հանձնաժողովի կողմից կրկին ուսումնասիրվել է գնման ընթացակարգի թիվ 7-րդ չափաբաժնով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի արժեք դաշտում ներկայացված գինը կազմում է 487 500 ՀՀ դրամ, իսկ հաջորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ <<Միկրորինգ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի արժեք դաշտում ներկայացված գինը կազմում է 805 000 ՀՀ դրամ: Սակայն ընդհանուր գինը դաշտում <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմում է 1 017 000 ՀՀ դրամ, իսկ <<Միկրորինգ>> ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ 966 000 ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին
(Կ. Գասպարյան)

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված պահանջներով, գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) <<Էյչ Գրուպ>> ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտը մերժել,

բ) <<Միկրորինգ>> ՍՊԸ-ին 7-րդ չափաբաժնի մասով ճանաչել առաջին տեղ զբաղեցնող մասնակից,

գ) հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

3. Ստացված փաստաթղթերի մասին
(Կ. Գասպարյան)

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացվել է եզրակացություն, որի համաձայն՝ <<Միկրորինգ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը որոշեց <<Միկրորինգ>> ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարարել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Scanned by CamScanner

4. Ընտրված մասնակիցներ ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Կ. Գասպարյան)

Հանձնաժողովը որոշեց 7-րդ չափանաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել <<Միկրորինգ>> ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և կատարել համապատասխան փոփոխություն:

Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին հրավերով նախատեսված ժամկետներում ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ն.Մեսրոպյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան

Scanned by CamScanner